

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

619-15.05.2020-ՏՏԳԲ-011/0) «ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության, փոփոխության(լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը փոփոխությունը(լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի(հիմնական գեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Վարազդատ Կարապետյան, Լիլիթ Մակունց, Հերիքնազ Տիգրանյան	«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (պ-619-15.05.2020-տտգբ-011/0)	Նախագծի 1-ին հոդվածի՝ 1-ին կետում՝ «տարվա» բառից հետո լրացնել «համապատասխան» բառը, «ստաժ» բառից հետո լրացնել «, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ» բառերը:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Վարազդատ Կարապետյան, Լիլիթ Մակունց, Հերիքնազ Տիգրանյան	«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (պ-619-15.05.2020-տտգբ-011/0)	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ կերպ՝ «16-րդ հոդվածը լրացնել նոր 1.1-ին, 1.2-րդ, 1.3-րդ, 1.4-րդ, 1.5-րդ, 1.6-րդ, 1.7-րդ, 1.8-րդ 6.1-ին և 6.2-րդ մասերով.» 1.3.-րդ մասում՝ հանել «պետք է» բառը: 1.4.-րդ մասում՝ «սահմանում է»	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է

			<p>բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերը:</p> <p>1.6.-րդ մասում «: Մեկ անգամ՝ 3 ամիս ժամկետով:» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ սույն հոդվածի 1.5-րդ մասով սահմանված ժամկետը չգերազանցող ժամկետով» բառերով:</p> <p>1.7.-րդ մասում «տնօրենի թափուր» բառերը փոխարինել «տվյալ» բառով:</p> <p>1.8.-րդ մասը շարադրել հետևյալ կերպ՝ «Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում որոշակի ժամկետով կատարում է գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի՝</p> <p>1) հղիության եւ ծննդաբերության արձակուրդի դեպքում.</p> <p>2) մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի</p>		
--	--	--	---	--	--

			<p>դեպքում.</p> <p>3) պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու դեպքում.</p> <p>4) իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության դեպքում.</p> <p>5) օրենքով սահմանված այլ դեպքերում:»:</p> <p>Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետը՝ լրացնել նոր 6.1.-րդ և 6.2.-րդ մասերով՝</p> <p>«6.1. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության գործադիր մարմնի պաշտոնում ընտրությունը (նշանակումը) իրականացվում է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքին և դրանից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերին համապատասխան:»</p> <p>«6.2. Հանրակրթության ոլորտի պետական ուսումնական հաստատության գործադիր</p>		
--	--	--	--	--	--

			մարմնի պաշտոնում ընտրությունը (նշանակումը) իրականացվում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքին և դրանից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերին համապատասխան:»		
	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Վարազդատ Կարապետյան, Լիլիթ Մակունց, Հերիքնազ Տիգրանյան	«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (պ-619-15.05.2020-տտգք-011/0)	Նախագծի 1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետ՝ «16-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետից հանել « և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ» բառերը:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Վարազդատ Կարապետյան, Լիլիթ Մակունց, Հերիքնազ Տիգրանյան	«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (պ-619-15.05.2020-տտգք-011/0)	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում «1» թիվը փոխարինել մեկ բառով:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է